



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Ք.Ապարան

27 հունվարի 2022թ. ժ.15:00

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ Ապարան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արկաղի Կարապետյանը:

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանը:

Նիստի բացմամբ՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արկաղի Կարապետյանը տեղեկացրեց, որ „Կարեն Եղիազարյան „կուսակցությունների դաշինքով ավագանու անդամ ընտրված՝ Արման Գազիկի Ալեքսանյանը վայր է դրել իր մանդատը: 24.01.2022թ. թիվ 17 տարածքային ընտրական հանձնաժողովի N 5 արձանագրությամբ՝ հիմք ընդունելով „Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասը Ապարան համայնքի ավագանու „Կարեն Եղիազարյան, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է նույն դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Կարեն Դավիթի Կարապետյանին:

Նիստի մասնակիցները շնորհավորեցին նորընտիր ավագանու անդամին:

Ավագանու „Կարեն Եղիազարյան „կուսակցությունների դաշինքի խմբակցությունը և „Քաղաքացիական պայմանագիր, կուսակցության խմբակցությունը նիստ վարողին ներկայացրեցին խմբակցությունների կանոնադրությունը, խմբակցությունների նախագահներին և քարտուղարներին, ինչը հրապարակվեց:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ Ապարան համայնքի ավագանու 21 անդամներից 18-ը՝ Արկաղի Գալուստի Կարապետյանը, Վահան Կամոյի Մակարյանը, Հայկ Սամվելի Սեդրակյանը, Կարեն Դավիթի Կարապետյանը, Դավիթ Ռուբիկի Ենոքյանը, Արթուր Վանիկի Խալաթյանը, Խաչիկ Հայկի Գեղամյանը, Աղաբեկ Սևակի Մանուկյանը, Վարդան Զավենի Մխիթարյանը, Ազվան Գեորգի Երեմյանը, Հովհաննես Գալուստի Սահակյանը, Արման Արաքսի Ասատրյանը, Սևակ Աշոտի Սաֆարյանը, Արթուր Ժորայի Փարվանյանը, Արտյոմ Ռոբերտի Կարապետյանը, Արշակ Սուրենի Սարգսյանը, Սուրեն Սլավիկի Սարգսյանը, Արտյոմ Անդրանիկի Դավթյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին զեկուցողներ՝ Գոռ Աբրահամյանը, համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Հրայր Մկրտչյանը, ԵՀՀ բաժնի պետ՝ Նելլի Միրեկանյանը, գլխավոր մասնագետներ՝ Մարիամ Նիկողոսյանը, Վահե Սուքիասյանը: Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գագիկ Մելքոնյանը, համայնքի ղեկավարի օգնական՝ Արկադի Ալեքսանյանը, տեսանկարահանում և հեռարձակում ապահովող, առաջատար մասնագետ՝ Մարիամ Քոչարյանը:

Հարգելի բացակայում էին ավագանու անդամ, համայնքի ղեկավար՝ Կարեն Եղիազարյանը/ԱԹ/, ավագանու անդամ՝ Գոռ Պետրոսյանը/ԱԹ/ և Արարատ Ավդալյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Օրակարգում էր՝

1. Հաստատել Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2022 թվականի հունվարի 27-ի երկրորդ նիստի օրակարգը՝

(զեկուցող՝ Ա. Կարապետյան)

2. Ապարան համայնքի ավագանու 27.12.2021թ. „Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի 2022թ. կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, N104-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

(զեկուցող՝ Գ. Աբրահամյան)

3. Ապարան համայնքի 2022թ բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը համայնքի 2022թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերի միջև բաշխելու, համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում կատարելու և Ապարան համայնքի 2022թ բյուջեն հաստատելու մասին.

(զեկուցող՝ Մ. Նիկողոսյան)

4. Ապարան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/ հաստատելու մասին

(զեկուցող՝ Հ. Մկրտչյան)

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

6. Ապարանի համայնքի Մելիքգյուղ գյուղում կատարված գույքագրման արդյունքները հաստատելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

7. Ապարան համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին

(զեկուցող՝ Ն. Միրեկանյան)

8. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Սարալանջ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 3.80604 հա հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

9.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի քարտեզագրման աշխատանքների ընթացքում համայնքի անվամբ հաշվառված բնակելի կառուցապատման հողամասերը քաղաքացու սեփականություն ճանաչելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

10. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղի վարչական տարածքում գտնվող 0.02964 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

11.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակգյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող 3.4071հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

12.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի հավաքական առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

Նիստը վարողը, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արկաղի Կարապետյանն առաջարկեց հաստատել ներկայացված օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 01-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

2. ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2021 Թ., ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2022 ԹՎԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկ. Գ. Աբրահամյան)

- Զեկուցեց համայնքի ղեկավարի խորհրդական Գոռ Աբրահամյանը, նա ներկայացրեց Ապարան համայնքապետարանի աշխատակազմի 2022թ կառուցվածքում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ: Համաձայն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պահանջի մեթոդական ուղեցույցերին հստակ համապատասխանեցնելու, կառուցվածքում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունից ելնելով առաջարկություն ներկայացրեց կատարել համապատասխան փոփոխություններ: Գ.Աբրահամյանը ներկայացրեց այն կետերն ու հատվածները, որոնք փոփոխության են ենթարկվել և ներկայացրեց իր դիտարկումներն:

Հարց ուղղեց ավագանու անդամ Սևակ Սաֆարյանը, հաստիքացուցակում ցրիչ հաստիքի և եկամուտների հավաքագրման բաժնի առկա հաստիքների վերաբերյալ, որը պարզաբանվեց:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 02-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

3.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԱՔԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԳԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ - հաշվապահ Մարիամ Նիկողոսյանը: ,, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ,, Բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջների, և ,, Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների համաձայն առաջարկություն ներկայացվեց հաստատել Ապարան համայնքի 2022թ. բյուջեն: Նախագծում ներկայացված էին ֆինանսաբյուջետային մի շարք կետեր, որոնք քննարկվեցին մանրամասն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 03-Ն որոշում)

ԼՍԵՑԻՆ.

4. ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ /ՏԱՊ/ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հրայր Մկրչյանը, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ 1-ին մասի 4-րդ կետի, 82.1-րդ հոդվածի պահանջները Հ.Մկրտչյանը նշեց, որ համայնքի 2022թ տարեկան աշխատանքային պլանը կազմելու նպատակով համայնքի բոլոր վարչական տարածքներում անցկացվել են հանրային լսումներ և այն խնդիրները, որոնք ավելի հրատապ են եղել բնակիչների համար ընդգրկվել է 2022թ. տարեկան աշխատանքային պլանում, իսկ առկա բոլոր հիմնախնդիրները ընդգրկվել են համայնքի հնգամյա զարգացման պլանում: Հ.Մկրտչյանի կողմից ՏԱՊ ներկայացվեց ըստ ոլորտների:

- Հարց ուղղեց ավագանու անդամ՝ Սևակ Սաֆարյանը, պլանով նախատեսված մանկապարտեզների, ասֆալտապատման աշխատանքների մատվ,ինչը պարզաբանվեց: Դիտարկումներով հանդես եկավ ավագանու անդամ Արամ Ասատրյանը, որը կարծիք հայտնեց, որ սիմպոզիումի համար պլանավորված ծախսերը կարելի է ուղղել համայնքում առկա այլ խնդիրների լուծմանը: Ինչին ի պատասխան Հ.Մկրտչյանը պարզաբանեց, որ պլանավորման ընթացքում անհրաժեշտ է ապահովել բոլոր ոլորտներով աշխատանքներ՝ համայնքի համաչափ զարգացման համար, վերը նշված միջոցառումը Ապարան համայնքին ապահովում է միջազգային ճանաչելիություն: Հարց ուղղեց ավագանու անդամ՝ Արշակ Սարգսյանը մեքենատրանսպորտային պարկի ստեղծման վերաբերյալ, ինչը պարզաբանվեց:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 11 , դեմ – 7, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 04-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԿԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար՝ Իդա Թադևոսյանը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ապարան համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի թիվ 99-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 4-րդ գլխի 51-րդ կետի պահանջների ստեղծվեցին Ապարան համայնքի ավագանու մշտական գործող հետևյալ հանձնաժողովները՝ Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, կրոնի, առողջապահության և սոցիալական հարցերի աջակցության հարցերի մշտական հանձնաժողովները.

1.Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, կրոնի, առողջապահության և սոցիալական հարցերի աջակցության հարցերի մշտական հանձնաժողով.

2.Քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողով.
3.Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական զարգացման հարցերի մշտական հանձնաժողով.
4.Ենթակառուցվածքներին աղընչվող հարցերի մշտական հանձնաժողով.Միաժամանակ հաստատվեց հանձնաժողովների անհատական կազմը՝ նախագահները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 05-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

6.ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԱՈՎԱԾ ՄԵԼԻՔԳՅՈՒՂԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանը այն մասին, որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի կետի 32-րդ կետ, 77-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարի 08.01.2016թ. թիվ N 2-Ն հրամանի պահանջների, հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի 20.12.2021թ. N261 կարգադրությունը՝ համայնքի կազմում ներառված Մելիքցյուղի նախկին համայնքի ակտիվների և պարտավորությունների գույքագրան նպատակով ստեղծված կենտրոնական հանձնաժողովի եզրակացությունը հիմա վրա առաջարկվում է հաստատել Ապարան համայնքի կազմում ներառված Մելիքցյուղ գյուղի ակտիվների ու պարտավորությունների գույքագրման արդյունքները::

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 06-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

7.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Նելլի Միրեկանյանը ներկայացնելով, որ համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ և 245-րդ հոդվածի 2-րդ մասերի, ՀՀ կառավարության 22.06.2012թ-ի N 822-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները առաջարկվեց Ապարան համայնքի 13 բնակավայրերի 30 քաղաքացիների տրամադրել հարկային արտոնություններ՝ հողի հարկի տույժ 815.541 դրամի չափով, շինության գույքահարկի տույժ՝ 179.686 դրամի չափով, փոխադրամիջոցի գույքահարկի մայր գումար՝ 85.067 դրամի չափով և տույժ՝ 79.127 դրամի չափով, ընդամենը՝ 1.159.421 դրամ: Ավագանին ծանոթացավ նախագծին կից ներկայացված հավելվածին, որտեղ առկա էին բոլոր դիմումատուների վերաբերյալ տվյալները: Հարցի վերաբերյալ կարծիքների փոխանակում տեղի ունեցավ ավագանու անդամների միջև:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 07-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

8.ՀՀԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱԼԱՆՁ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3.80604ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուքիասյանը, վերջինս ներկայացրեց որ հողատարածքը հանդիսանում է պետական սեփականություն, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի առաջարկեց հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Սարալանջ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 02-096-0139-0001 ծածկագրից՝ 3.80604 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ խոտհարքի գործառնական նշանակության հողամասը փոխելուն և այն դարձնել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության: Ներկայացրեց, որ առաջարկված հողակտորի կառուցապատելու համար առկա է բիզնես ծրագիր, հյուրանոցային տնակներ, ադմինիստրատիվ օբյեկտ, տաղավարներ և ճանապարհներ կառուցելու համար: Ներդրվելու է 112 250 000 դրամ և ստեղծվելու է 10-15 աշխատատեղ: Ավագանու անդամ՝ Ս.Մաֆայանը հարցրեց ուղղեց, արդյոք կաա ունի որն է այլ ծրագրի հետ, ինչը պարզաբանվեց: Ներդրումային ծրագրի վերաբերյալ իր դիտարկումը ներկայացրեց Հ.Մկրտչյանը, որ «,հայկական բարեկեցիկ գյուղի ստեղծում», ծրագիր է, որը նպաստելու է գյուղացու արտադրանքի իրացմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 08-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

9. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՄԲ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- Զեկուցեց աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուքիասյանը: Ապարան համայնքի Ապարան քաղաքի քարտեզագրման աշխատանքների ընթացում 02-002-0121-0116 ծածկագրով 0.06944հա բնակելի կառուցապատման հողամասերը քարտեզագրման ընթացքում հաշվառվել է համայնքի անվամբ, սակայն այդ հողատարածքները ՀԽՍՀ ժողովրդական դեպուտատների Ապարանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի նիստի՝ 1990թ օգոստոսի 3-ի N 13 արձանագրության 40 կետի որոշմամբ հատկացվել է Ադիբեկ Ասքանազի Ղազարյանին: Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ և 32-րդ կետերի պահանջները առաջարկություն ներկայացվեց համայնքի անվամբ սխալմամբ հաշվառված 02-002-0121-0116 կադաստրային ծածկագրով 0.06944հա բնակելի կառուցապատման հողամասերը ճանաչել քաղաքացի Ադիբեկ Ասքանազի Ղազարյանին սեփականությունը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 09-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

10. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔՈՒՉԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.02964 ՀԱ ՀԱՄԱՅՆՔԱՑԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուքիասյանը: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ

1918-Ն որոշմամբ հաստատված կարգի առաջարկեց հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-111-0236-0027 ծածկագրից՝ 0,02964հա գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ այլ հողերի գործառնական նշանակության հողամասը փոխելուն և այն դարձնել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության: Միաժամանակ նշեց, որ առաջարկված հողամասը քաղաքացու կողմից օգտագործվում է որպես գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս:

ՔՎԵԱԲԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 10-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

11.ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔՈՒՉԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 3.4071ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուքիասյանը: Ներկայացրեց այն, որ ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-111-0225-0012 կադաստրային ծածկագրով 2.7743հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության վարելահող և 02-111-0225-0013 ծածկագրից 0.6328հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության այլ հողատեսքերի՝ ընդամենը 3.4071հա հողամասերի նպատակային նշանակությունը փոխել և դարձնել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության: Միաժամանակ ներկայացրեց, որ հողամասերը ստացել են միջգերատեսչական հանձնաժողովի 21.12.2021թ-ի թիվ 263 դրական եզրակացությունը:

ՔՎԵԱԲԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 11-Ա որոշում)

Զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահե Սուքիասյանի կողմից ավագանու թույլտությամբ օրակարգ ընդգրկվեց ևս մեկ հարց՝

ԼՍԵՑԻՆ.

12.ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.10.2021Թ ԹԻՎ 89-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Վ.Սուքիասյանը ներկայացրեց, որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքի 33 և 34-րդ հոդվածների պահանջներով, առաջարկում է Ապարան համայնքի ավագանու 15.10.2021թ-ի թիվ 89-Ա որոշման 1-ին մասում գրառված հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության՝ պատմական և մշակութային գործառնական նշանակության փոխարեն կարդալ բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՔՎԵԱԲԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ – 18, դեմ – 0, ձեռնպահ – 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 12-Ա որոշում)

ԼՍԵՑԻՆ.

13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

- Զեկուցեց աշխատակազմի քարտուղար Իդա Թադևոսյանը վերջինս առաջարկեց հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

62-րդ հողվածը սահմանել Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ՝ կողմ - 18, դեմ - 0, ձեռնպահ - 0, ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

(Ավագանու N 13-Ա որոշում)

Ավագանի՝	(կողմ-18)	(դեմ-0)	(ձեռնպահ-0)
Կարապետյան Արկաղի			
Մակարյան Վահան			
Սեդրակյան Հայկ			
Կարապետյան Կարեն			
Ենոքյան Դավիթ			
Խալաթյան Արթուր			
Գեղամյան Խաչիկ			
Մանուկյան Աղաբեկ			
Մխիթարյան Վարդան			
Երեմյան Աղվան			
Սահակյան Հովհաննես			
Փարվանյան Արթուր			
Ասատրյան Արամ			
Սաֆարյան Սևակ			
Դավթյան Արտյոմ			
Սարգսյան Սուրեն			
Սարգսյան Արշակ			
Կարապետյան Արտյոմ			

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝



Ա.Կարապետյան